ԱՍՏՂԻԿ ԲԱԼԱՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի ակտիվ մասնակցությունն ապահովելու, ինչպես նաև ուսուցման անհատականացման համար արդյունավետ է բանավոր և գրավոր ակտիվ միջավայրի ստեղծումը: Նպատակահարմար է ուսուցումը կազմակերպել ստուգատեսի շրջանակում՝ սովորողներին ակտիվորեն ներգրավելով արդյունավետ աշխատանքի մեջ և սովորեցնելով նրանց ինքնուրույն որոշումներ կայացնել, իրականացնել կոնկրետ քայլեր և վերլուծել ստացված արդյունքները, կատարել ինքնագնահատում՝ հաշվի առնելով միջառարկայական և վերառարկայական կարողություններն ու հմտությունները:

Բանալի բառեր՝ *ստուգատես, չափորոշչային պահանջներ, գնահատում, հետազոտական գործունեություն, վերլուծական կարողություններ, արժեքային համակարգ, ինքնագնահատում:*

Ուսումնական գործընթացում *յուրաքանչյուր սովորողի* ակտիվությունն ապահովելու և ուսուցման անհատականացման նպատակով արդյունավետ է ավանդական մեթոդների համակցումը ժամանակակից համագործակցային մեթոդներին, ինչը սովորողներին հնարավորություն է տալիս մշտապես գտնվելու բանավոր և գրավոր ակտիվ հաղորդակցության մեջ:

Առարկայական չափորոշչի պահանջները բավարարելու և ծրագրով նախատեսված բովանդակությունն արդյունավետ ուսումնասիրելու նպատակով մայրենիի յուրաքանչյուր դաս կառուցվում է որպես բազմաբաղադրիչ համակարգ: Խոսքային գործունեության տեսակների (խոսել, լսել, կարդալ, գրել)[1] համադրված կիրառումը և ուսումնական գործընթացի ակտիվ որոնողական բնույթը սովորողների համար լայն հնարավորություններ են ստեղծում ոչ միայն գիտելիքների ձեռքբերման, այլև կարողությունների ու արժեքների համակարգի տիրապետման համար: Այս դեպքում առավել կարևորվում է բուն ուսումնական գործընթացը, հետազոտական աշխատանքի մղող մեթոդների ու ստուգման ձևերի ընտրությունը, քանի որ լավ պլանավորված և ճշգրիտ իրականացվող աշխատանքի դեպքում՝ չեն կարող վատ արդյունքներ գրանցվել:

Մայրենիի դասընթացն առանցքային դեր ու նշանակություն ունի՝ կարդալու, կարդացածը վերլուծելու, սեփական դիրքորոշումն ու մոտեցումներն արտահայտելու, լեզվական գիտելիքները ճիշտ կիրառելու և այլ կարողությունների տիրապետման համար, որոնք նախապայման են մյուս բոլոր առարկաների բովանդակության արդյունավետ յուրացման ու անձի ընդհանուր ներդաշնակ զարգացման համար: Հետևաբար մայրենիի դասերի կազմակերպման պասիվ

1 Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական ծրագրեր (1 – 9-րդ դասարաններ), Եր., 2011, էջ 7 – 38:

վերարտադրողական բնույթը չի կարող բավարար հիմքեր ստեղծել և նպաստել մտածող, հետազոտող, ինքնուրույն գործունեություն ծավալող սովորողի ձևավորման համար, իսկ ողջ գործընթացի բարելավումը հնարավոր է միայն մայրենիի դասընթացից սովորողների ձեռքբերումների համակողմանի, ամբողջական, լիարժեք ու վերջնական ստուգման, տվյալների վերլուծության դեպքում:

Հաշվի առնելով մայրենիի առարկայական չափորոշչի պահանջները և վերլուծելով մայրենիից դպրոցականների ձեռքբերումները լիարժեք ու բազմակողմանիորեն գնահատելու անհրաժեշտությունը՝ նպատակահարմար է սովորողների ուսումնառությունը կազմակերպել ստուգատեսի[1] շրջանակում: Ստուգատեսն իր նպատակներով, բովանդակությամբ, կառուցվածքով և ընթացքով հիշեցնում է երկարաժամկետ նախագիծ:

Ստուգատեսը կազմակերպվում է հինգ փուլով՝ պլանավորում, նախապատրաստում, իրականացում, ներկայացում և վերլուծություն՝ յուրաքանչյուր փուլի համար հստակ ձևակերպելով նրա խնդիրներն ու քայլաշարը: Այսպես.

- *նախապատրաստական փուլ*՝ խմբի կամ խմբերի ձևավորում, թեմայի ընտրություն, նպատակի սահմանում,
- *պլանավորման փուլ*՝ խնդիրների ձևակերպում, նախնական պլանի մշակում, ժամկետների որոշում, դերերի և ուսումնական խնդիրների բաշխում, գնահատման չափանիշների մշակում, ռազմավարությունների ընտրություն, հնարավոր արդյունքների քննարկում,
- *հետազոտական փուլ*՝ աղբյուրների ուսումնասիրում, տեղեկատվության հավաքագրում, տեղեկատվության մշակում, եզրահանգումների ձևակերպում, արդյունքների ներկայացման ձևի ընտրություն, զեկույցի կամ հաշվետվության նախապատրաստում,
- *արդյունքների ներկայացման փուլ*՝ աշխատանքի արդյունքների ներկայացում, ներկայացված արդյունքների քննարկում,
- *գնահատման կամ վերլուծության փուլ*՝ աշխատանքի արդյունքների վերլուծություն և գնահատում, ներկայացման վերլուծություն և գնահատում, աշխատանքի ընթացքի վերլուծություն:

Այս ամենը կարող ենք ներկայացնել օրինակի տեսքով՝ որպես ուսումնասիրության լայն թեմա վերցնելով Սյունիքի պատմամշակութային ժառանգությունը և ժամանակակից արժեքները հետևյալ ուղղություններով՝ ճարտարապետություն, քանդակագործություն, գրականություն, երաժշտություն, նկարչություն, կինո, թատրոն, կրթություն և այլն: Ընտրելով որևէ ուղղություն՝ կարևոր է կանգ առնել որևէ հիմնախնդրի վրա, բազմակողմանիորեն ուսումնասիրել այն, առաջարկել հիմնախնդրի լուծման տարբերակներ, անգամ իրականացնել դրան ուղղված որոշակի քայլեր և ներկայացնել ստացված արդյունքները: Օրինակ, խոսելով Սյունիքի ճարտարապետության մասին՝ սովորողը (կամ սովորողները) ոչ միայն ներկայացնում է Սյունիքի ճարտարապետական կառույցները (Կնեվանք, Հալիձորի բերդ կամ Շատին վանք), այլ, օրինակ, դրանց ներկայիս վիճակը, առաջարկում է ճարտարապետական կառույցների պահ-

1 Primary Years Programme Exhibition guidelines, International Baccalaureate, Peterson House, July 2008.

պանման ծրագիր կամ մոտեցումներ, իրականացնում է կոնկրետ գործողություններ և ցուցադրում է իր գործունեության արդյունքները:

Առաջնորդվելով ստուգատեսի քայլերի տրամաբանությամբ՝ նախապատրաստման և պլանավորման փուլում.

- սովորողներից յուրաքանչյուրը (կամ սովորողների խումբը) որոշում է նեղ թեման կամ հարցը, որի շրջանակում, առաջնորդվելով անհատական հետաքրքրություններով, ձևակերպում է որևէ հիմնախնդիր՝ մոտ մեկ – մեկուկես ամիս զբաղվելով դրա ուսումնասիրությամբ:
- Քննարկվում են սովորողների աշխատանքի ձևերը/եղանակները և դրանց ներկայացման հնարավոր ձևերը՝ գրավոր (զեկույց, ռեֆերատ, գրքույկ,...), տեսողական (ցուցահանդես, պաստառ, սահիկահանդես,...), բանավոր (ելույթ, բանավեճ, ձայնագրություն,...), ստեղծագործական ներկայացումներ (երգ, պար, թատրոն, նկար, բանաստեղծություն, պատմվածք,...):
- Հանդիպում է կազմակերպվում ծնողների հետ և ներկայացվում սաների անհատական կամ խմբային հետազոտության, դրանում նրանց դերի ու մասնակցության մանրամասները, ինչպես նաև այն չափանիշները, որոնց հիման վրա գնահատվում են աշխատանքները: Դրանք են՝ հետազոտության հարցերի ձևակերպում, տեղեկատվության և նյութերի հավաքագրում, տեղեկատվության վերլուծություն և մշակում, հետազոտության արդյունքների գրավոր ներկայացում, հետազոտության արդյունքների բանավոր ներկայացում (պրեզենտացիա), ակտիվություն, աշխատանքի և արդյունքների նկատմամբ վերաբերմունք, փոխգործություն խմբի անդամների և ստուգատեսի մյուս մասնակիցների հետ:
- Ուսուցիչներից ընտրվում են մենթորներ, որոնք պետք է աջակցեն սովորողներին հետազոտության ողջ ընթացքում՝ հանդիպումների բովանդակությունն ու ցուցումներն արձանագրելով օրագրում, կատարեն ընթացիկ գրառումներ չափորոշչային երեք խումբ բաղադրիչների վերաբերյալ:

Հետազոտության ողջ ընթացքում յուրաքանչյուր սովորող վարում է «Օրագիր», որն արտացոլում է գործընթաց և սովորողի որոշակի կարողությունների զարգացումը: «Օրագրում» նշումներ է կատարում նաև մենթորը՝ գրառելով սանի աշխատանքի ընթացքի կարևոր պահերը, ինչպես նաև հետագա աշխատանքի վերաբերյալ իր ցուցումները:

Սովորողները հետազոտության ընթացքում և արդյունքների ներկայացման փուլում հնարավորություն են ունենում ընտրելու տեղեկատվական հաղորդակցական տարբեր տեխնոլոգիաներ և կապի միջոցներ (համակարգիչ, ձայնագրիչ, հեռուստացույց, համացանց, հեռախոս և այլն):

Ստուգատեսի գնահատման աշխատանքներին մասնակցում են ստուգատեսի մասնակից բոլոր կողմերը՝ սովորողներն իրենք, մենթորները, ծնողները: Բացի այդ՝ ձևավորվում է հանձնաժողով, որը յուրաքանչյուր զեկույց գնահատում է նախօրոք կազմված սանդղակաշարի (ռուբրիկ) միջոցով, որը կարող է լինել այսպիսին.

Մակարդակ / Չափանիշ	Ոչ բավարար	Բավարար	Լավ	Գերազանց
Աշխատանքի բովանդակությունը	Թեման ներկայացնում է միակողմանի և աղքատիկ բառապաշարով:	Թեմայի հիմնական բովանդակությունը ներկայացնում է, սակայն երբեմն չի ապահովում մտքերի միջև տրամաբանական կապերը:	Մտքերը շարադրում է կապակցված հարուստ խոսքով՝ պահպանելով քերականական յուրացրած կանոնները:	Թեման հիմնավորում է բազմակողմանիորեն՝ անկաշկանդ արտահայտելով իր սեփական դիրքորոշումը:
Հետազոտության արդյունքների բանավոր ներկայացում	Դժվարանում է թեմայի բովանդակությունը ներկայացնել և պատասխանել ունկնդիրների հարցերին:	Որոշակի աջակցությամբ արտահայտվում է՝ կիրառելով հիմնականում պատմողական նախադասություններ, փորձում է պատասխանել ունկնդիրների հարցերին:	Ազատ արտահայտվում է՝ խոսքը ձևավորելով տարբեր երանգի նախադասություններով, պատասխանում է ունկնդիրների հարցերին:	Արտահայտվում է ազատ, հանգամանորեն պատասխանում է ունկնդիրների հարցերին, թեման ներկայացնելուց հետո հարցեր է ուղղում ներկաներին:
Ներկայացման օժանդակ նյութեր (պաստառ, գրքույկ, սահիկահանդես, ...)	Աշխատանքի ներկայացման ժամանակ չի կիրառում լրացուցիչ նյութեր:	Աշխատանքի ներկայացման ժամանակ կիրառում է առնվազն մեկ օժանդակ նյութ, որը մասամբ օգնում է թեմայի բացահայտմանը:	Աշխատանքի ներկայացման ժամանակ կիրառում է մեկից ավելի օժանդակ նյութեր, որոնք թեմայի ընկալումը դարձնում են ավելի մատչելի և խորը:	Կիրառվող բոլոր օժանդակ նյութերը ձևավորմամբ և բովանդակությամբ լրացնում են թեմայի ներկայացումը՝ ընկալումը դարձնելով խորը և բազմակողմանի:

Այսպիսով, ստուգատեսին նախապատրաստվելիս սովորողներն ընդգրկվում են համագործակցային արդյունավետ աշխատանքի մեջ՝ պատասխանատվություն կրելով ոչ միայն սեփական աշխատանքի հաջողության, այլ նաև ընկերների և ընդհանրապես խմբի հաջողության համար: Հաշվի առնելով սովորողների ինքնակազմակերպման, որոնողական կարողությունների զարգացման պահանջը՝ նպատակահարմար է նրանց ուսումնառությունն ուղղորդել դեպի ինքնուրույն որոշումների կայացում, կոնկրետ գործողությունների իրականացում, դրանց արդյունքների վերլուծում, հետագա քայլերի որոշում, սեփական հաջողությունների գնահատում:

Ի տարբերություն գիտելիքների ստուգման ընդունված հարցարանային ձևի[1]՝ ստուգատեսը հնարավորություն է տալիս ստուգելու, թե յուրաքանչյուր սովորող ինչ արդյունքներ է արձանագրել չափորոշչի ոչ թե մեկ՝ «գիտելիք» բաղադրիչից, այլև կրթության բովանդակության բոլոր երեք բաղադրիչների առումով՝ գիտելիքներ, կարողություններ և արժեքային համարգ: Կարևոր է այն հանգամանքը, որ ստուգատեսի ժամանակ հնարավոր է խուսափել առանձին առարկաներից քննություններ կազմակերպելուց, քանի որ այն թույլ է տալիս սովորողի ձեռքբերումները գնահատել բոլոր կողմերով՝ դիտարկելով մի-

1 Գիտելիքների ստուգման թեստերի նմուշներ (2010 – 2013): www.atc.am

ջառարկայական և վերառարկայական կարողությունների ու հմտությունների զարգացման մակարդակը:

Ստուգատեսի մասնակիցները կունենան ցանկալի արդյունք, եթե՝

- սահմանեն հստակ, կոնկրետ, իրատեսական և չափելի նպատակներ,
- դրսևորեն ինքնակազմակերպման, որոնողական, վերլուծական կարողություններ,
- կազմեն գործունեության նախնական քայլաշարը՝ գնահատելի և չափելի վերջնարդյունքով,
- թեմայի վերաբերյալ ընտրեն և ուսումնասիրեն բազմազան և նպատակային աղբյուրներ,
- դրսևորեն տեղեկատվության հետ աշխատելու գրագիտություն,
- նախապատրաստեն զեկույց/ներկայացում,
- ներկայացնեն աշխատանքի արդյունքները, պաշտպանեն իրենց տեսակետը՝ ներկայացնելով հիմնավորումներ,
- բարձրացված խնդիրների համար առաջարկեն կոնկրետ և իրատեսական լուծումներ:

Ժամանակակից մանկավարժության բանաձևերից մեկն է՝ «Արա՛, որ սովորես»: Հետևաբար պետք չէ սպասել ու ակնկալել, որ վերոնշյալ կարողություններն ինքնըստինքյան պետք է ձևավորվեն սովորողների մեջ, կամ, որ սովորողներն այդ կարողություններով պետք է դպրոց ընդունվեն: Հենց նպատակային, ճիշտ պլանավորված նախագծային աշխատանքներն էլ կստեղծեն այդ կարողությունները զարգացնելու նպաստավոր պայմաններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ (1 - 9-րդ դասարաններ), Ե., 2011, 40 էջ:
2. Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական ծրագրեր (1 – 9-րդ դասարաններ), Ե., Անտարես, 2011, 81 էջ:
3. Գիտելիքների ստուգման թեստերի նմուշներ (2010 – 2013). www.atc.am:
4. Primary Years Programme Exhibition guidelines, International Baccalaureate, Peterson House, July 2008.

ИССЛЕДОВАНИЕ СЮНИКСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ЦЕННОСТЕЙ В РАМКАХ ВЫСТАВКИ - А. Ж. БАЛАЯН - В целях обеспечения активного участия *каждого учащегося* в образовательном процессе, а также для индивидуализации обучения, эффективно создание активной устной и письменной среды. Целесообразно организовать обучение в рамках выставки, с вовлечением самих учащихся в продуктивный процесс работы, обучая их самостоятельному принятию решений, осуществлению конкретных действий и их итоговому анализу, выбору дальнейших действий и оценке собственных достижений, а уже потом всесторонне оценить достижения каждого учащегося, принимая во внимание уровень развития межпредметных и надпредметных умений и навыков.

Ключевые слова: выставка, стандарты, оценивание, исследовательская деятельность, аналитические способности, система ценностей, самооценка.

THE STUDY OF THE HISTORICAL-CULTURAL VALUES OF SYUNIK IN THE FRAMES OF A REVEW - ASTGHIK BALAYAN - It is effective for the learners to create oral and written communication environment to provide *each learner´s* active participation in the learning process and to personalize the teaching process. It is therefore advisable to organize the teaching process within the exhibition, involving the learners in collaborative productive work, directing their learning to self-determination by implementing concrete actions and analyzing their outcomes, identifying further steps and evaluating their own success. At the end of the exhibition, evaluate the achievements of each learner by all sides, considering the development of the interdisciplinary and transdisciplinary skills.

Key words: exhibition, standards, assessment, inquiry/research skills, analytical skills, value system, self- assessment.